ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

«08» դեկտեմբերի 2023թ. N Մ/778 Ա

ք. Արմավիր

ՈՐՈՇՈՒՄ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2023 թվականի դեկտեմբերի 4-ի N ԳՍ/15.2/37049-2023 հանձնարարականը, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի բոլոր համայնքներում, տնտեսություններում և գյուղատնտեսությամբ զբաղվող առևտրային կազմակերպություններում առկա անասնագլխաքանակի համատարած հաշվառման աշխատանքները 2024 թվականի հունվարի 1-ից մինչև 18-ն ընկած ժամանակահատվածում իրականացնելու նպատակով

Որոշում եմ՝

1. Ստեղծել աշխատանքային խումբ՝ համաձայն հավելվածի:
2. Աշխատանքային խմբին /Ա.Այվազյան/՝ աշխատանքային խմբի աշխատանքներին մասնակից դարձնել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության Արմավիր մարզային

գործակալության աշխատակիցներին և համայնքների ղեկավարներին /համաձայնությամբ/:

3. Աշխատանքային խմբին /Ա.Այվազյան/՝ սույն որոշամբ նախատեսված աշխատանքներն ավարտել 2024թվականի հունվարի 20-ին և արդյունքների մասին զեկուցել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Недействительная подпись

X

ԷԴՎԱՐԴ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Մարզպետ՝ Подписано: HOVHANNISYAN EDVARD 2001830505

Է.Հովհաննիսյան

Հայաստանի Հանրապետության

Արմավիրի մարզպետի

2023թվականի դեկտեմբերի 8 ---ի

N 11778-Ա որոշման

Աշխատանքային խմբի կազմ

Խմբի ղեկավար՝ Ա.Այվազյան	Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության պետ
Անդամներ՝	
Գ. Մելիքյան	Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության գլխավոր մասնագետ
Ս. Մխիթարյան	Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության գլխավոր մասնագետ
Ջ.Սարդարյան	Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության գլխավոր մասնագետ
Կ. Մարգարյան	Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության ավագ մասնագետ

Գլխավոր քարտուղար՝ Ա. Հովհաննիսյան

Недействительная подпись

VERIFIED OCSP 08.12.2023 14:50:40 GMT+4

Подписано: HOVHANNISYAN ARAM 3812640023